ԹԱԹՈՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
Իրավունքի և արդարության կենտրոն

# ԶԵԿՈՒՅՑ

## ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ՀՈՒԼԻՍ 2023

## Ցանկ


***Ներածություն ..... 3***

***I. Զոհված հայ զինվորների ընտանիքներին պատճառված տառապանքն ու անհանգստությունը Ադրբեջանի կողմից աճյունների վերադարձի միտումնավոր ուշացման պատճառով ..... 7***

Լուսանկար 1 ..... 8

Լուսանկարներ 2, 3, 4 և 5 ..... 10

Լուսանկար 6 ..... 11

1) Ցոր զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի հայ զինվորների ընտանիքները ..... 12

2) 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի պատերազմի ժամանակ զոհված հայ զինծառայող Ս.Կ.-ի ընտանիքը. ..... 18

2) Այլ դեպքեր ..... 18

***II. Միջազգային և տարածաշրջանային իրավական կարգավորումներ ..... 19***

1) Մահացածների աճյունների և անձնական իրերի վերադարձը..... 19

2) Բռնի անհետացում ..... 20

3) Հաստատված մահեր ..... 24

4) Մահացածների մարմինների նկատմամբ ցուցաբերված վերաբերմունք ..... 24

5) 5) մահվան և հուղարկավորության միջև ընկած ժամանակահատվածի չափազանց մեծ տևողությունը ..... 24

***Ամփոփում ..... 25***

## Ներածություն

2020 թվականի սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան Ադրբեջանը սկսեց անկանոն ռազմական ագրեսիվ օդային և հրետանային հարձակումներ իրականացնել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) դեմ սահմանային գծի ողջ երկայնքով՝ թիրախավորելով քաղաքացիական բնակավայրեր և խաղաղ բնակչությանը: Ավելին, 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի պատերազմը Հայաստանի դեմ ադրբեջանական ատելության քաղաքականության շարունակական էկզիստենցիալ սպառնալիքների ապացույցն է: Այս ագրեսիան ուղղված էր Հայաստանի Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի դեմ (Ջերմուկ, Վարդենիս, Գորիս, Մարտունի, Սոթք, Տեղ, Վերիշեն, Ակներ և այլ քաղաքներ ու գյուղեր):

Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի կոպիտ խախտումները պետք է դիտարկել Ադրբեջանի հայատյաց քաղաքականության և նախորդ վայրագությունների ժամանակ ռազմական հանցագործությունների անպատժելիության համատեքստում: Այս քաղաքականությունը հիմնված է էթնիկ ատելության վրա՝ հայերին և ադրբեջանցիներին լարվածության և թշնամանքի մեջ պահելով ողջ աշխարհում: Սա խաթարում է անվտանգությունը տարածաշրջանում, ոչնչացնում է խաղաղության հեռանկարները և զրոյացնում մարդկանց բնականոն կյանքը:

Այս քաղաքականությունը միշտ հանգեցնում է վայրագությունների և խոշտանգումների, գլխատումների և դիտավորյալ սպանությունների, քաղաքացիական բնակավայրերի ոչնչացման և ատելության հրահրման: Դա ապացուցեցին Արցախյան (Լեռնային Ղարաբաղ) 2020 թվականի 44-օրյա պատերազմը, Արցախյան 2016 թվականի ապրիլյան պատերազմը և Ադրբեջանի այլ ռազմական հարձակումները Հայաստանի կամ Արցախի դեմ:

Մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի պատերազմի և 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմի ընթացքում զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկումը բացահայտել է ադրբեջանական զինված ուժերի կողմից հայ զինվորների և խաղաղ բնակչության նկատմամբ խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի, արտադատական սպանությունների և դաժանությունների դեպքեր: Ադրբեջանական զինված ուժերի այս կոպիտ խախտումներն ուղեկցվել են հայերի նկատմամբ կազմակերպված ինտենսիվ ատելության խոսքով և թշնամանքով, որը հովանավորվում էր Ադրբեջանի կողմից :

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմենը) (2016-2022թթ.) և Արցախի Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար հրապարակել են հետևյալ հիմնավոր և փաստարկված զեկույցները, որոնք հաստատում են պետականորեն

հովանավորվող ատելության և հայատյացության առկայությունը (ապացույցները ներկայացված են այս զեկույցում, որոնք օրինակներ են):

- Արցախի մարդու իրավունքների պաշտպան. «Միջանկյալ հրապարակային զեկույց 2016 թվականի ապրիլի 2-5-ը ադրբեջանական զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի զինծառայողների նկատմամբ իրականացված վայրագությունների մասին»[1]:
- Արցախի մարդու իրավունքների պաշտպան. «Միջանկյալ հրապարակային զեկույց Ադրբեջանում հայատյացության կազմակերպված ատելության խոսքի և հայերի նկատմամբ թշնամանքի վերաբերյալ», 2018թ[2]:
- Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան և Արցախի Մարդու իրավունքների պաշտպան. «Ադրբեջանում կազմակերպված ատելության խոսքի և էթնիկ հայերի նկատմամբ թշնամանքը՝ որպես ադրբեջանական զինված ուժերի կողմից էթնիկ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի հիմնական պատճառ» (սեպտեմբեր-նոյեմբեր, 2020 թ.)[3]:
- Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան. «Սպանված հայ զինվորների և շղթայված ռազմագերիների պուրակը Բաքվում. մարդկային տառապանքների և ռասիզմի խթանման թանգարան», 2021թ.[4]:
- Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը. «Ադրբեջանական զինված ուժերի հետ շփման գոտիներում ապառազմականացված անվտանգության գոտու հրատապ անհրաժեշտություն՝ որպես Հայաստանում բնակչության իրավունքների պաշտպանության հիմնարար իրավունքների երաշխիք. ապացույցների վրա հիմնված վերլուծություն Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում տիրող իրավիճակի համատեքստում», 2021թ.[5]:
- Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան և Արցախի մարդու իրավունքների պաշտպան. «Ադրբեջանի կեղծ խաղաղաշինության և ազնիվ երկխոսության բացակայության փաստեր՝ որպես մարդու իրավունքներին ուղղված երկարամյա սպառնալիքներ. Բաքու-Թբիլիսի հարթակներ (իրավիճակը 2016 և 2017 թվականներին)»[6]:
- Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան. «Հայերի նկատմամբ ատելության և թշնամանքի ադրբեջանական քաղաքականությունը՝ որպես մարդու իրավունքների էթնիկ

---

[1] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ:
https://artsakhombuds.am/ru/document/560.

[2] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ:
https://artsakhombuds.am/hy/document/570

[3] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ:
https://www.ombuds.am/images/files/2032f021fe81176414a649d588ad0e86.pdf

[4] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ:
https://ombuds.am/images/files/96e6d55d169a784b6424e4d565b29dba.pdf

[5] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ:
https://ombuds.am/images/files/26a9d7838a4f87fc198e65daadbc4ef1.pdf

[6] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ:
https://ombuds.am/images/files/f3caae1085fb33cb2ad98365cc3e88ce.pdf

դրդապատճառներով ոտնահարումների հիմնական պատճառ՝ հետպատերազմյան զարգացումների վերաբերյալ ապացույցների վրա հիմնված վերլուծություն», 2022թ[7]:

Արձանագրված նյութերի և Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ նախագահի հրապարակային հռետորաբանության վերլուծությունը, ինչպես նաև այս հասարակության ներկայիս միտումները փաստում են պատճառահետևանքային կապը պետության կողմից աջակցվող ատելության խոսքի և էթնիկ հայերի նկատմամբ թշնամանքի (հայատյացություն), ինչպես նաև երկու պատերազմների ընթացքում մարդու իրավունքների կոպիտ խախտումների միջև:

Նշված նյութերը տարածվում էին Facebook-ի, Twitter-ի, TikTok-ի և այլ սոցիալական ցանցերի միջոցով՝ թիրախավորելով հայկական ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի օգտատերերին, այդ թվում՝ անչափահասներին: Բացի այդ, խոշտանգումների և մահապատժի ենթարկվածների ֆոտո և վիդեո նյութերը նույնպես ուղղակիորեն փոխանցվում են ընտանիքի անդամներին: Այն նպատակ ունի հնարավորինս շատ հոգեբանական ցավ կամ տառապանք պատճառել ընտանիքի անդամներին կամ հարազատներին: Մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ վերը նշված բոլորը խրախուսվում են Ադրբեջանի իշխանությունների կողմից:

Ադրբեջանական իշխանությունների և զինված ուժերի կողմից կիրառված մեկ այլ մեթոդ էր մահացածների որոնողական աշխատանքներին արհեստականորեն խոչընդոտելը, ինչպես նաև դիակների և մարդկային աճյունների հանձնման միտումնավոր ձգձգումը: Սա նաև նպատակ ուներ ծանր հոգեբանական ցավ պատճառել ընտանիքի անդամներին և լարված վիճակում պահել հայ հասարակությանը :

Սույն զեկույցը վերլուծում է հրադադարի մասին հայտարարությունից երկար ժամանակ անց ծնողներին և հարազատներին զոհված զինծառայողների անդամահատված և անճանաչելի դիակների ուշ վերադարձի դեպքը: Դրանում մասնավորապես ուշադրություն է դարձվում Ադրբեջանի կողմից զոհված զինծառայողների ընտանիքի անդամների մարդու իրավունքների խախտումներին:

Ընթացիկ հաշվետվության պատրաստման համար անցկացվել են հարցազրույցներ ընտանիքի անդամների հետ: Հավաքված արդյունքները վերլուծվել են Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄԻՀ) և Մարդու իրավունքների միջազգային իրավունքի (ՄԻՀԻ) համատեքստում: Հարցազրույցների մասնակիցների անունները չեն հրապարակվում գաղտնիության և անվտանգության նկատառումներից ելնելով:

[7] Հատուկ հանրային զեկույցը հասանելի է անգլերենով սույն հղմամբ: https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf?fbclid=IwAR3BPWvKOIreGmQ7r_e VZbgKR3-F1MiP0JbxlXni-JJcA_KGKVjA9H71M3g#page50

Սույն զեկույցը պատրաստվել և հրապարակվել է Իրավունքի և արդարադատության կենտրոն «ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամի, այդ թվում՝ ԱՄՆ իրավաբաններ Կարօ Ղազարեանի Գառնիկ Քերքոնեանի կողմից: Այս թիմն ունի 2016-2022 թվականներին փաստահավաք գործունեության հետ ակտիվ ներգրավվածության մեծ փորձ, հետևաբար այդ ժամանակաշրջանի փաստահավաք առաքելությունների, ուսումնասիրությունների և մասնագիտական վերլուծությունների արդյունքները նույնպես համապատասխանաբար օգտագործվել են այս համատեքստում:

# I. Զոհված հայ զինվորների ընտանիքներին պատճառված տառապանքն ու անհանգստությունը Ադրբեջանի կողմից աճյունների վերադարձի միտումնավոր ուշացման պատճառով

1. Մարդու իրավունքների կոպիտ խախտումները, որոնք առաջացնում են տառապանք և անհանգստություն զոհերի ընտանիքներին դիտարկվում են որպես վատ վերաբերմունք: Սա հատկապես վերաբերում է հարազատների մահվան հաստատված դեպքերին և նրանց մարմինների նկատմամբ վերաբերմունքին:
2. 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի պատերազմից հետո՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ին եռակողմ հրադադարի մասին հայտարարություն է ստորագրվել Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի կողմից[8]: Հայտարարության 8-րդ կետը սահմանում է, որ «[Կողմերը] պետք է փոխանակեն ռազմագերիներին, պատանդներին և այլ կալանավորված անձանց և դիակների»[9]:
3. Այնուամենայնիվ, արձանագրվել են մի շարք դեպքեր 2022 թվականի սեպտեմբեր-նոյեմբերյան և 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմներում, երբ Ադրբեջանը միտումնավոր չի վերադարձրել դիերն ու մասունքները հարազատներին՝ պատճառելով ծանր հոգեկան տառապանք և անհանգստություն[10]:
4. Ինչպես նշված է Արցախում 44-օրյա պատերազմի ընթացքում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հայկական հասարակական կազմակերպությունների կողմից պատրաստված զեկույցում, առկա ապացույցները վկայում են այն մասին, որ բազմաթիվ քաղաքացիական անձինք ադրբեջանական բանակի անդամների կողմից գերեվարվելուց հետո պահվել են անհաղորդ կալանքի տակ: Որոշ խաղաղ բնակիչների հարազատները նրանց ձերբակալելու և կալանավորելու փաստի մասին իմացել են միայն համացանցում հրապարակված տեսանյութերից, որոնք վկայում են այն մասին, որ Ադրբեջանը չի կատարել իր վերահսկողության տակ գտնվող քաղաքացիական անձանց գտնվելու վայրի մասին տեղեկատվություն փոխանցելու և հարազատների հետ շփումը թույլ տալու պարտավորությունը[11]:
5. Ավելին, ժամանակակից տեխնոլոգիաներն օգտագործվել են սոցցանցերի ադրբեջանցի օգտատերերի կողմից՝ հայ բնակչությանը ծանր տառապանք պատճառելու համար: «Telegram» սոցիալական ցանցի ադրբեջանական ալիքներում ստեղծվել են չաթ-բոթերի

---

[8] Այսուհետ՝ Եռակողմ հայտարարություն

[9] Եռակողմ հրադադարի մասին 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարություն, հասանելի է սույն հղմամբ: https://www.primeminister.am/en/press- release/item/2020/11/10/Announcement/.

[10] BBC-ի մամուլի հրապարակումները, ներառյալ պարոն Արման Թաթոյանի հետ հարցազրույցները, հասանելի են հետևյալ հղմամբ: https://www.bbc.com/russian/news-64886810 և https://www.bbc.com/russian/features-57739392.

[11] Հայաստանի ՀԿ-ների զեկույց, «Մարդու իրավունքների խախտումները 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում», էջ 152, հասանելի է հետևյալ հղմամբ: https://www.osf.am/wp-content/uploads/2022/06/Fact-Finding-Report_FINAL_web.pdf.

միջոցով հայ զինվորների և խաղաղ բնակիչների խոշտանգված և մասնատված մարմինների լուսանկարների կպչուն պիտակներ (stickers): Պիտակների համար օգտագործվել են 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի պատերազմի և 2022 թվականի սեպտեմբերին Հայաստանի դեմ պատերազմի ժամանակ տեղի ունեցած վայրագությունների լուսանկարները:

6. Այս պիտակները ստեղծվել են 2022 թվականի սեպտեմբերի 14-ին, սակայն բացահայտվել են սեպտեմբերի 18-ին: Ստեղծվելուց անմիջապես հետո դրանք հասանելի են դարձել հանրությանը՝ հանրային հաղորդակցության ընթացքում դրանք ներբեռնելու և օգտագործելու հնարավորությամբ: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է 119 լուսանկար (այսինքն՝ 119 կպչուն-պիտակ): Դրանք 5 օրվա ընթացքում ներբեռնվել էին ավելի քան 20000 անգամ:




***Լուսանկար 1***

7. Ադրբեջանական զինված ուժերի խախտումներն արձանագրվել են «Human Rights Watch»-ի կողմից, որը պատրաստվել է այդ շրջանում Մարդու իրավունքների պաշտպան, Արման Թաթոյանի և զինվորների ընտանիքների շահերը ներկայացնող իրավապաշտպաններ Արտակ Զեյնալյանի և Սիրանուշ Սահակյանի հետ համատեղ: Դրանում, մասնավորապես, ասվում է, որ սոցիալական ցանցերում հրապարակվել են

տասնյակ տեսանյութեր, որոնք փաստում են հայ ռազմագերիների նկատմամբ բռնություն գործադրելու մասին: «Human Rights Watch»-ը մանրամասն ուսումնասիրել է 14-ին և զրուցել հինգ ռազմագերու ընտանիքների հետ, որոնց նկատմամբ բռնությունը հրապարակվել էր[12]:

8. Ավելին, պատերազմի ընթացքում և պատերազմից անմիջապես հետո Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը ձեռք է բերել օբյեկտիվ ապացույցներ, որոնք հավաստում են, որ ադրբեջանցիներն անօրինական կերպով վերցնում են հայկական սոցիալական ցանցերի գաղտնաբառերն ու օգտանունները և կառավարում այդ էջերը: Ապացույցները ցույց են տալիս, որ սոցցանցի այս էջերը կամ հաշիվները ակտիվացված են ադրբեջանական IP (Ինտերնետ Պրոտոկոլ) տիրույթից: Մեր մշտադիտարկումը ցույց է տալիս, որ դրանք մեր հայրենակիցներն են, ովքեր գերի են ընկել կամ այլ կերպ հայտնվել են Ադրբեջանում[13]: Սրանք ընդամենը մի քանի օրինակ են հայ զինվորների ընտանիքների նկատմամբ ադրբեջանական դաժան վերաբերմունքի տասնյակ դեպքերից:

[12] «Ադրբեջան՝ հայ ռազմագերիները վատ վերաբերմունքի են արժանանում», Human Rights Watch, հասանելի է հետևյալ հղմամբ: https://www.hrw.org/news/2020/12/02/azerbaijan-armenian-prisoners-war-badly-mistreated.

[13] Տես, օրինակ, Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակումները «Ադրբեջանցիները վարում են հայ գերիների սոցիալական ցանցերի էջերը. Մարդու իրավունքների պաշտպանի ձեռքբերած ապացույցները» հասանելի են հետևյալ հղմամբ: https://www.ombuds.am/en_us/site/ViewNews/1344, «Ադրբեջանցիները վարում են հայ ռազմագերիների սոցիալական ցանցերի էջերը՝ ատելություն և թշնամանք տարածելու նպատակով. Մարդու իրավունքներ. Պաշտպանի ուսումնասիրություն», հասանելի է հետևյալ հղմամբ: https://www.ombuds.am/en_us/site/ViewNews/1357 կամ «Ադրբեջանցիները մեր հասարակության մեջ ներքին թշնամանք են տարածում հայ գերիների սոցիալական էջերով. Պաշտպանը նոր ապացույցներ է ձեռք բերել», հասանելի է հետևյալ հղմամբ: https://www.ombuds.am/en_us/site/ViewNews/1426:

[redacted] Գլխավոր էջ

| | |
|---|---|
| Site | www.facebook.com |

**Web Session Terminated**

| | |
|---|---|
| Time | 17 հուլ, 2020 թ., 18:17 |
| IP հասցե | [redacted] |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/86.0.4240.75 Safari/537.36 |
| Cookie | e_GG********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

**Login**

| | |
|---|---|
| Time | 17 հուլ, 2020 թ., 18:17 |
| IP հասցե | [redacted] |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/86.0.4240.75 Safari/537.36 |
| Cookie | e_GG********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

**Web Session Terminated**

| | |
|---|---|
| Time | 15 հուլ, 2020 թ., 23:49 |
| IP հասցե | [redacted] |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/86.0.4240.75 Safari/537.36 |
| Cookie | e_GG********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

[redacted] Գլխավոր էջ

| | |
|---|---|
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

[redacted]

| | |
|---|---|
| Time | 10 հուլ, 2020 թ., 19:05 |
| IP հասցե | [redacted] |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/85.0.4183.121 Safari/537.36 |
| Cookie | Fo5w********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

**Mobile Session Terminated**

| | |
|---|---|
| Time | 10 հուլ, 2020 թ., 19:05 |
| IP հասցե | [redacted] |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/85.0.4183.121 Safari/537.36 |
| Cookie | Fo5w********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

**Web Session Terminated**

| | |
|---|---|
| Time | 10 հուլ, 2020 թ., 19:00 |
| IP հասցե | [redacted] |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/85.0.4183.121 Safari/537.36 |
| Cookie | Fo5w********** |
| Քաղաք | Baku |

[redacted] Գլխավոր էջ

| | |
|---|---|
| IP հասցե | [redacted] |
| Browser | [redacted] |
| Cookie | [redacted] |
| Քաղաք | Yerevan |
| Տարածաշրջան | Yerevan |
| Երկիր | AM |
| Site | www.facebook.com |

**Web Session Terminated**

| | |
|---|---|
| Time | 23 հուլ, 2020 թ., 16:37 |
| IP հասցե | 85.132.71.56 |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/86.0.4240.111 Safari/537.36 |
| Cookie | e_GG********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |
| Site | www.facebook.com |

**Login**

| | |
|---|---|
| Time | 23 հուլ, 2020 թ., 15:03 |
| IP հասցե | 85.132.71.56 |
| Browser | Mozilla/5.0 (Windows NT 6.1) AppleWebKit/537.36 (KHTML, like Gecko) Chrome/86.0.4240.111 Safari/537.36 |
| Cookie | e_GG********** |
| Քաղաք | Baku |
| Տարածաշրջան | Baku |
| Երկիր | AZ |

Whois IP 85.132.71.56

Updated 26 minutes ago

```
% This is the RIPE Database query service.
% The objects are in RPSL format.
%
% The RIPE Database is subject to Terms and Conditions.
% See http://www.ripe.net/db/support/db-terms-conditions.pdf

% Note: this output has been filtered.
%       To receive output for a database update, use the "-B" flag.

% Information related to '85.132.64.0 - 85.132.95.255'

% Abuse contact for '85.132.64.0 - 85.132.95.255' is 'abuse@delta-telecom.net'

inetnum:        85.132.64.0 - 85.132.95.255
netname:        DELTA-DSL
descr:          DELTA Broadband Network
country:        AZ
admin-c:        RA907-RIPE
tech-c:         EK1287-RIPE
status:         ASSIGNED PA
mnt-by:         MNT-DELTA-TEL
mnt-lower:      MNT-DELTA-TEL
mnt-routes:     MNT-DELTA-TEL
created:        2011-03-18T12:08:21Z
last-modified:  2011-03-18T12:08:21Z
source:         RIPE

person:         Elvin Kelenterov
address:        241 Sharifzadeh str
address:        Baku, AZ1012
address:        Azerbaijan Republic
phone:          +99412 4311420
phone:          +99412 4040478
phone:          +99450 2058570
fax-no:         +99412 4310065
nic-hdl:        EK1287-RIPE
remarks:        Technical contact Delta Telecom LTD
mnt-by:         MNT-DELTA-TEL
created:        2006-04-15T08:21:53Z
last-modified:  2017-10-30T21:48:54Z
source:         RIPE # Filtered

person:         Rahid Alekberli
address:        Baku, AZ1012
phone:          +994 12 404 12 12
nic-hdl:        RA907-RIPE
mnt-by:         MNT-DELTA-TEL
created:        2003-03-03T10:29:45Z
last-modified:  2013-12-16T12:38:35Z
source:         RIPE

% Information related to '85.132.71.0/24AS29049'

route:          85.132.71.0/24
descr:          AzerSat-Route-85.132.71.0/24
origin:         AS29049
mnt-by:         AZERSAT-MNT
created:        2004-12-03T14:11:24Z
last-modified:  2004-12-03T14:11:24Z
source:         RIPE

% This query was served by the RIPE Database Query Service version 1.98 (ANGU
```

***Լուսանկարներ 2, 3, 4 և 5***

9. Մեկ այլ դեպքով Մարդու իրավունքների պաշտպանը հայտնել է, որ 44-օրյա պատերազմի ընթացքում՝ հոկտեմբերի 16-ին, ժամը 13:00-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերի ներկայացուցիչներից մեկը զանգահարել է հայ զինվորի եղբորը և ասել, որ եղբայրն իրենց հետ է, գլխատել են ու պատրաստվում են նրա լուսանկարը տեղադրել համացանցում: Դրանից մի քանի ժամ անց եղբայրը լուսանկարը գտել է սպանված զինվորի սոցիալական ցանցի էջում:

10. Համոզմունքն այն է, որ սոցիալական ցանցերում հայ զինվորի լուսանկարը տեղադրողները ադրբեջանական զինված ուժերից են : Երկու հեռախոսազանգ է եղել ադրբեջանցի զինվորների հետ, ովքեր ատելության խոսքեր են օգտագործել հայ սպանված զինվորի եղբորը նվաստացնելու նպատակով: Ինչպես վերջինս հայտնեց Մարդու իրավունքների պաշտպանին, ահազանգերը եղել են հայ զինծառայողի հեռախոսահամարից[14]:

***Լուսանկար 6***

11. Այս և մի շարք այլ հանցավոր արարքներ հաստատում են ադրբեջանցի զինծառայողների մտադրությունը զոհերի ընտանիքներին և հայ հասարակությանը հոգեկան տառապանք պատճառելն է: Նրանք մտադիր են խաղալ զգացմունքների հետ:

[14] Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակումը «Ադրբեջանցիները գլխատել են հայ զինվորին, զանգահարել և հայտնել եղբորը, այնուհետև նկարը տեղադրել համացանցում. Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է փաստը», հասանելի է հետևյալ հղմամբ: https://ombuds.am/en_us/site/ViewNews/1337

Նման դեպքեր գրանցվել են նաև 2016 թվականի ապրիլյան պատերազմի ժամանակ: Նրանց մոտեցումը չի փոխվել: Այս հանցագործությունները դարձել են առավել դաժան, քանի որ նման վայրագությունների մեղավորները մնում են անպատիժ:

12. Մի քանի դեպքերի օրինակով, սույն գլուխը հաղորդում է զոհված հայ զինվորների հարազատների տագնապի և անհանգստության մանրամասները, որոնք ի հայտ են եկել իրենց ազգականների դիակների և մասունքների զգալի ուշացումով հետ վերադարձի հետևանքով՝ գտնված փաստահավաք աշխատանքների արդյունքում: Նպատակն է նաև նկարագրել հայ զինվորների հարազատների նկատմամբ ադրբեջանական խախտումների հոգեբանական ազդեցությունը, ինչը նրանց իրավունքների կոպիտ ոտնահարում է:

13. Ինչպես նշվեց ներածության մեջ, ընթացիկ զեկույցի մեթոդաբանության առանցքային հենասյուներից մեկը 2022 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի և 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմների ժամանակ զոհված հայ զինվորների հարազատների հետ հարցազրույցն է: Այն թույլ է տալիս Միջազգային մարդասիրական իրավունքի և Մարդու իրավունքների միջազգային իրավունքի համատեքստում սկզբնաղբյուրից ապացույցներ հավաքագրել և դրանք վերլուծել:

## 1) Ցոր զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի հայ զինվորների ընտանիքները

14. Սույն գլխի նպատակն է դիտարկել ընտանիքների հետ հարցազրույցների ընթացքում հաղորդված տեղեկատվությունը, համապատասխան քրեական վարույթի նյութերը և այդ գործով դատական վարույթի վերաբերյալ հանրությանը հասանելի աղբյուրները:

15. Ադրբեջանը խախտել է եռակողմ հայտարարությունը՝ Ցոր զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի 11 զոհված զինծառայողների անդամահատված և անճանաչելի դիակները միայն մեկ տարի անց ծնողներին և հարազատներին վերադարձնելով:

16. 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերյան պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 12-ին, Ցոր զորամասի Դ-20 հրետանային դիվիզիոնի հայ զինվորները Ձուվարլուում հայտնվեցին ադրբեջանական զորքերի շրջափակման մեջ և ենթարկվեցին հարձակման: Մարտի ընթացքում հայ զինծառայողների մի մասը դուրս է եկել հակառակորդի կրակի գոտուց և նահանջել թիկունք: Սակայն զինվորներից 20-ը հարկադրված պայքարի մեջ են մտել և զոհվել: Նրանց մարմինները մնացել են կրակային դիրքում[15]:

17. 9 դի (Լ.Գ., Ս. Գ., Վ. Հ., Ն. Բ., Ա. Ա., Գ. Բ., Ն. Ա., Վ. Ա., Գ. Ա.) դուրս է բերվել 2020 թվականի դեկտեմբերի 1-ին հայկական կողմից իրականացված որոնողական աշխատանքների ընթացքում: Մնացած տասնմեկ դիակը (Ռ.Պ., Վ.Պ., Ս.Պ., Կ.Դ., Դ.Ա., Ա.Թ., Ն.Օ., Ա.Մ., Հ.Ա.,

[15] Հայ զինվորների դիակների դիտավորյալ անդամահատման փաստերի վրա հիմնված զեկույց, պատրաստված «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից, էջ 3:

Հ.Պ., Հ.Մ.) ադրբեջանցիները հայկական կողմին են հանձնել պատերազմից միայն մեկ տարի անց՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ին:

18. Ջուվարլուում (Արցախի Վարանդայի շրջան) տեղի ունեցած ճակատամարտից հետո սկսեցին շրջանառվել տեսագրություններ, որտեղ երևում էին նշված հարձակման հետևանքով Ցոր զորամասի զոհված հայ զինվորների դիերը: Այս զինվորների ընտանիքի անդամների հետ հարցազրույցների համաձայն՝ նրանք նույնպես տեսել են խնդրո առարկա տեսանյութերը և կարողացել են հստակ բացահայտել իրենց հարազատներին: Սակայն Ադրբեջանը ընտանիքի անդամներին է փոխանցել միայն զինվորների մարմինների խոշտանգված մասունքները[16]:

19. Ցորի զորամասի հայ զինվորների ընտանիքի անդամների հետ հարցազրույցներից հետո զինծառայողների նույնականացումը հնարավոր է եղել կատարել միայն դեզօքսիրիբոնուկլեինաթթվի (ԴՆԹ) հետազոտություններից հետո: ԴՆԹ հետազոտության արդյունքները ստանալու համար միջինը մեկ ամիս է պահանջվել: Ավելին, նրանք պետք է տային ԴՆԹ-ի նմուշները:

20. Սրանք լրացուցիչ տանջանքներ են պատճառել ընտանիքի անդամներին, որոնցից կարելի էր խուսափել, եթե Ադրբեջանը ժամանակին հանձներ Ցորի զորամասի հայ զինվորների դիերը՝ հետևելով Միջազգային մարդասիրական իրավունքի և Մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերին:

21. Իրավունքի և արդարադատության կենտրոն «ԹԱԹՈՅԱՆ» հիմնադրամի ներկայացուցիչները հարցազրույցներ են անցկացրել Ցորի զորամասի հայ զինծառայողների հարազատների հետ՝ Ա. Ա.-ի, Ա. Մ.-ի, Ս. Պ.-ի, Հ. Մ.-ի, Ն. Բ.-ի, Լ. Գ.:

22. Ընտանիքի բոլոր անդամներն ընդգծել են, որ «Telegram»-ի ալիքներից մեկում տեսել են տեսանյութ, որտեղ հայտնվել են իրենց սիրելիների մարմիններն ամբողջությամբ: Հետևաբար, նրանք ամեն ջանք գործադրել էին դիերը ստանալու համար, բայց, ցավոք, հաջողություն չեղավ:

23. Ստորև բերված են հարցազրույցների մանրամասները.

24. Ա.Ա.-ի հետ հարցազրույցի ժամանակ զոհված զինծառայող Ա.Ա.-ի հայրը հայտնել է.

*«Դեպքից հետո, բոլոր հնարավոր տարբերակներով փորձել ենք մեր երեխաների մարմինները հետ բերել, սակայն թշնամին թույլ չէր տալիս տեղանքին մոտենալ, ոչ էլ հակառակորդ կողմն էր նախաձեռնում մեր երեխաներին մեզ վերադարձնել կամ գոնե փոխանակել իրենց զոհերի մարմինների հետ: Այնուհետև, պատերազմի ավարտից հետո, 2020 թվականի դեկտեմբերի 1-ին կարողացանք որոնողական աշխատանքների նպատակով մուտք գործել մարտական կետ, որտեղ զոհվել էին մեր երեխաները: Այնտեղ ես տեսա մեր երեխաների դիերի հետքերը, սակայն դիերը չկային, գտանք ընդամենը ինը երեխայի մասունք: Մասունքները հավաքեցինք, ինձ հետ էին նաև ծնողներից Ջ.Մ., Ա.Բ. և այլոք: Մասունքներն ուղարկվեցին ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, այնտեղից*

[16] Հայ զինվորների դիակների դիտավորյալ անդամահատման փաստերի վրա հիմնված զեկույց, պատրաստված «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից, էջ 8-11

*տևական ժամանակ անց նոր տեղեկացանք մասունքների նույնականացման և համընկման վերաբերյալ: Մասունքներից մի քանիսը պատկանում էին իմ որդուն՝ Արթուր Ասրյանին: Ադրբեջանական կողմը ի սկզբանե ամեն ինչ անում էր որոնողական աշխատանքներին խոչընդոտելու համար: Տեսել ենք արհամարհական և նվաստացնող վերաբերմունք իրենց կողմից: Ես շարունակել եմ որոնողական աշխատանքները մեր մյուս ծնողների հետ մինչև բոլորին գտնելը: Այս պահի դրությամբ անհայտ կորած է հրամանատար Նորայր Հայրապետյանը, և ընտանիքը հայտնվել է ծանր իրավիճակում»:*

25. Զոհված զինծառայող Ա.Մ.-ի հայրը՝ Ֆ.Մ.-ն պատմում է.

*«Մենք ծնողներով մոտ քսան անգամ այցելել ենք դեպքի վայր: Առաջին հայացքից կթվա թե հատուկ արտոնություն ունեինք որպես ծնողական խումբ, սակայն իրականությունը այլ պատկեր ուներ: Նախ շատ մեծ դժվարությամբ էինք կարողանում գալ համաձայնության, որ այցելենք տեղանք որոնողական աշխատանքների: Իսկ գնալուց հետո, մեզ թույլ չէին տալիս նորմալ որոնել, քանիցս սահմանափակել են մեր աշխատանքները, թույլ տալով շատ փոքրիկ հատվածում պարզապես քայլել: Այդ իսկ պատճառով մենք մի քանի անգամվա ելումուտից հետո էլի մասունքներ կամ արտահագուստ էինք գտնում: Շատ նսեմացնող վերաբերմունք էր մեր հանդեպ, նույնիսկ մեր երեխաների արտահագուստները կամ սաղավարտները թույլ չէին տալիս վերցնել, գոնե որպես հիշատակ: Բանակցությունների ժամանակ բոլոր ջանքերը գործադրել ենք մեր երեխաներին հետ վերադարձնելու համար, հիմնականում ցինիկ պատասխաններ էինք լսում՝ իբրև այո կան բայց դե տարբեր խմբեր են այդտեղ մտել չգիտենք ով ուր է տարել երեխաներին: Հետո մի ադրբեջանցի սպաի հետ ստացվեց ավելի քաղաքակիրթ երկխոսություն, նա պատմեց, որ Սովետական Միության տարիներին ծնվել է Ստեփանակերտում: Նրան ցույց ենք տվել տեսանյութը և խնդրել, որ օգնի գտնել մեր երեխաներին: Նույնիսկ այդ տեսանյութում մի ադրբեջանցի, ով տեսածայնագրում էր դեպքի վայրը և խոսում, ծաղրում էր մեր երեխաներին, խնդրեցինք, որ այդ անձին գտնի ու նրա միջոցով պարզի երեխաների պայմանական թաղման վայրը: Նա պատասխանեց, որ հայ դիպուկահարները նրան սպանել են: Անշուշտ սուտ խոսեց, քանի որ մեր երեխաներից մեկի մորաքույրը՝Անահիտը իր ծանոթների միջոցով պարզել էր, այդ անձի ինքնությունը և նրա ողջ լինելու հանգամանքը, իսկ ԱՀ ԱԻՆ-ի աշխատակիներից մեկը անգամ գտել էր նրան Շուշիում հերթական անգամ որոնողական աշխատանքների գնալու նպատակով թույլտվություն ստանալու ժամանակ: Այդ անձը նույնպես չասաց երեխաների տեղը, ընդամենը նշեց, որ մոտակայքով էր անցնում և տեսավ դիեր, որոշեց տեսանկարել:*

*Հերթական այցերից էլի մի օր, գնացինք Շուշի թույլտվություն ստանալու նպատակով, պետք է գնայինք որոնողական աշխատանքների, ադրբեջանցի սպաներից մեկը մեզ ասաց, որ շատ լավ գիտեն մեր հրետանավորներին, նրանք լավ կռվել են, զգալի վնասներ հասցրել իրենց զինված ուժերին և զոհվել հերոսաբար: Մեր երեխաներին խոցելու համար՝ մեծ ջանքեր են գործադրել թշնամիները: Եվ ինչպես այդ սպան ասաց, իրական շախիդների պես են զոհվել և այդպես էլ թաղվել, բայց թաղման վայրը չասաց: Հետո զարմացած հարցրեց, այսպիսի զինվոր*

*ունեիք, ինչպես պարտվեցիք: Ես ոչինչ չկարողացա ի պատասխան ասել, լռեցի:*

*Տևական ժամանակ ես և Ա.Մ. (Հ.Մ. մորաքույրը), բոլոր պետական գերատեսչությունների և միջազգային կառույցների դռները թակել ենք, ներկայացրել դեպքի մանրամասները և խնդրել օգնություն՝ մեր երեխաներին գտնելու հարցում: Հետո գնացինք Արցախ, ծնողներով մոտեցանք ռուս խաղապահներին և բանակցեցինք մեր երեխաների հետ վերադարձի համար: Կրկին անգամ ցույց տվեցինք տեսանյութը, և ասացինք, որ այս զոհված երեխաները նույնպես մերն են, մեզ իրենց աճյունները բերեք: Նախ կհասկանանք ովքեր են զոհվել, իսկ ով այս տեսանյութում չկա, կենթադրենք՝ գերի է: Օրեր անց, ռուս խաղապահների միջնորդությամբ ադրբեջանական կողմը տասնմեկ զինծառայողի աճյուն է հանձնում հայկական կողմին: Մեր ծնողներից Արմեն Ասրյանը աճյունները ընդունողներից մեկն է լինում, զննության ժամանակ գտնում է որդուս զին գրքույկը: Իրականում, խառը մասունքներով տասնմեկ պարկեր էին, առանց ԴՆԹ նույնականացման դժվար էր պարզել երեխաների ինքնությունը: Լավ հիշում եմ նոյեմբեր ամիսն էր, մոտ մեկ ամիս տևեց ԴՆԹ նույնականացման գործընթացը: Իսկ վերջում պարզեցինք, որ բոլոր մասունքները մեր երեխաներինն են, որևէ այլ զինծառայողի մասունք կամ թշնամու, կամ այլ զորամասի , չի հայտնաբերվել այդ պարկերում: Փաստորեն, Ադրբեջանցի այդ սպան մեզ հետ ազնվ եղավ և ասաց, որ մեր հերոս երեխաներին շախիդի պես են թաղել, առանձին փոսում: արդեն բոլոիս էլ պարզ էր, որ տեղն էլ իմացել են, պարզապես չեն հայտնել»:*

26. Զոհված զինծառայող Ս.Պ.-ի հայրը՝ Ս.Պ.-ն վկայում է.

*«Գրեթե բոլոր որոնողական աշխատանքներին մասնակցել եմ: Ամենից ծանր օրը ինձ համար, երբ տեսանյութով համադրելու արդյունքում դեպքի վայրում գտա որդուս ընկած տեղը, պայթեցրած մեքենայից փոքր ինչ հեռու էր, այդ օրը թույլ տվեցին մոտենալ մեքենային, սակայն մինչ այդ չէին թույլ տալիս: Գտա որդուս սաղավարտը մազերի մի փունջ կպած էր վրան: Ուզեցի վերցնել, թույլ չտվեցին: Երկար համոզելուց հետո թողեցին վրայի մազերը վերցնել: Այդ մի փունջ մազը, իմ և կնոջս միակ հուշն էր մնացել: Տևական ժամանակ փնտրել ենք մեր երեխաներին, բոլոր հնարավոր տարբերակներով բանակցել, սակայն տասնչորս ամիս ոչ մի հաջողության չենք հասել: Տասնչորս ամիս անց, ադրբեջանական կողմը աճյունները հանձնում է մեզ, սակայն իրականում խառը ոսկորներով պարկեր էին, մեկ ամիս տևեց նույնականացման գործընթացը, հետո պարզվեց մի քանի ոսկոր էլ մեր որդունն է: Ծանր օրեր ունեցանք, իմ սիրտը վիրահատեցին, կինս ուղեղի կաթված ստացավ, այժմ չի խոսում և չի քայլում, անվասայլակով ենք տեղաշարժում»:*

27. Զոհված զինծառայող Հ.Մ.-ի մորեղբայր Կ. Մ.-ն հարցազրույցի ժամանակ նշել է հետևյալը.

*«Քույրս միայնակ մայր էր, իր միակ որդուն ուղարկեց բանակ: Մեր Հ.-ը իր զինակից ընկերների հետ զոհվել է 2020 թվականի դեկտեմբերի 12-ին, սակայն կոնքազդրի մեկ ոսկոր ստացել ենք դեպքից տասնչորս ամիս անց: Քրոջս առողջական վիճակը շատ ծանր էր, որոնողական*

*աշխատանքները իրականացնում էի ես և մյուս քույրս Ա-ը: Ես գնում էի մեր զոհված երեխաների հայրերի հետ դեպքի վայր և այնտեղ էի փորձում գտնել մեր Հ.-ին, իսկ Ա-ը բոլոր դիահերձարաններում էր փնտրում: Ամենից ցավալի օրերից մեկը, երբ դեպքի վայրում գտա Հ-իս արտահագուստը, և ադրբեջանցի սպաները թույլ չտվեցին ձեռք տալ նույնիսկ նրա վերնազգեստը: Նրանք խուզարկեցին այն և գտան Հ-իս հեռախոսը: Շատ խնդրեցի, որ հետ տան, սակայն համառորեն մերժեցին և չտվեցին: Այնուհետև, մեր ծնողներից Ա. Ա.-ի ջանքերով միայն հեռախոսի SIM քարտը վերադարձրին: Ես միայն բոլորի կամքին հակառակ, նրա արտահագուստից պոկեցի մետաղյա կրծքանշանը, որի վրա նրա անուն ազգանունն էր: Գոնե մի հիշատակ ուզում էի ունենալ»:*

28. Ա.Մ.-ն՝ Հ.Մ.-ի մորաքույրը, հարցազրույցի ժամանակ նշել է.

*«2020 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ դժբախտությունը, այդ օրվանից սկսած բոլոր հնարավոր տարբերակներով փորձել եմ երեխայի դին բերել: Սակայն իմ ջանքերն ապարդյուն էին, բոլոր պատասխանատու գերատեսչությունները վստահեցնում էին, որ ադրբեջանական կողմին մարմինների փոխանակումը չի հետաքրքրում, թշնամի երկրի իշխանությունները քանիցս հրադադարի ռեժիմը խախտել են և թույլ չեն տվել դիակների փոխանակում: Սպասել եմ մինչև պատերազմի ավարտ, որից հետո ինքս սկսել եմ դիահերձարաններում փնտրել երեխային: Ընթացքում ծանոթացել եմ Հ-իս զինակիցների ծնողների հետ, և համախմբված շարունակել մեր որոնողական աշխատանքները: Ինձ համար դաժան փորձություն էր այդ ամբողջ ընթացքը, մի կողմից քրոջս ծանր վիճակը, մյուս կողմից երեխայի անհայտ լինելու հանգամանքը: Սակայն ամենից ծանր օրը, որն ինձ աբողջությամբ խեղեց, մեր բոլոր ծնողների համախմբված հայտարարության օրն էր: Հիշում եմ հայկական կողմը պետական գաղտնիք հանդիսացող ականապատված տարածքների քարտեզները փոխանցեց ադրբեջանական կողմին գերիների հետ փոխանակման համար: Այդ ժամանակ լուրեր շրջանառվեցին, որ ադրբեջանական կողմը նաև ճնշումներ է գործադրում հայկական կողմի վրա՝ պահանջելով տարածքային զիջումներ գերիների դիմաց: Իսկ մենք դեռ չգիտեինք մեր երեխաներից ողջ մնացած գոնե մեկը կա՞: Մենք բոլոր ծնողներով հավաքվեցինք և լրատվամիջոցներով հայտարարեցինք՝ Հայրենիքը մեկն է և բոլորինն է, գալիք սերնդներինը, մեր ազգային ինքնության միակ օջախը, այն չի կարող սակարկվել: Մենք մեր երեխաներին առուծախի առարկա չենք դարձրել, բայց թող բոլորը իմանան, որ հանուն մեր հայրենիքի, պետության և ժողովրդի զոհվեցին, հաշմվեցին, գերեվարվեցին և անհայտ կորան բազմաթիվ երեխաներ, մեր երկրի ամեն թիզ հողը մեզ համար անգին է: Այդ գիշերն ամենից չարաբաստիկն էր, երանի չլուսացնեի: Մի պահ այնպիսի զգացողություն կար ինձ մոտ, որ Հ-իս դժվարին պահին դավաճանել եմ: Այդ օրվանից մինչ օրս կյանք երևույթը արժեզրկվեց ինձ համար:*

*Տևական ժամանակ բազմաթիվ հանդիպումներ եմ ունեցել ՀՀ ԱԱԾ ղեկավարության հետ, մեր կողմից պարբերաբար կատարվել են փաստահավաք աշխատանքներ, ես այն շարունակ փոխանցել եմ երեխաների որոնողական աշխատանքների պատասխանատվությունը*

*ստանձնած կառույցներին: Տասնչորս ամիս անց, Հ-ս մեկ կոնքազդրի ոսկոր փոխանցեցին մեզ: Մենք չենք ասում, որ հուղարկավորել ենք մեր երեխային, մենք ընդամենը փաստում ենք, որ հողին ենք հանձնել Հ-ս զոհվելու հանգամանքը ապացուցող փաստ: Մեր երեխայի գերեզմանը մինչ օրս բաց է, հույս ունենք այլ մասունքներ կամ գուցե ամբողջական կմախք մի օր նույնպես մեզ կփոխանցեն»:*

29. Ավելին, Ա. Բ.-ն՝ զոհված զինծառայող Ն. Բ.-ի մայրը, ասել է.

*«Տևական ժամանակ լուր չունեինք, բայց Երևանից մեզ հայտնեցին, որ կան մասունքներ, որ ծանր վիճակում են և չեն կարողանում նույնականացնել, սակայն կասկածներ ունեն, որ դրանք իմ որդու ձեռքերն են: Հետո մեր ծնողներից Արմեն Ասրյանը ինձ ցույց տվեց մասունքների նկարները, երկու ձեռքեր էին հյուսվածքները պահպանված, ես միանգամից ճանաչեցի իմ որդու ձեռքերը: Բայց իմ պնդումներից անկախ, կա ընթացակարգ, որ պետք է պարտադիր ԴՆԹ-ով նույնականցվեին դրանք: Մեր Երևանի ծնողների ջանքերով կատարվեց կրկնակի նմուշառում ու փորձաքննություն: Վերջում հաստատեցին, որ իմ որդու մասունքներն էին: Ըստ մեր հայ քննիչների, ձեռքերը պոկված էին այնպիսի հատվածից, որ կասկած էր առաջացնում նրա զոհվելու հանգամանքը, ուստի առաջարկեցին սպասել, մինչև այլ մասունքներ նույնպես հայտնաբերվեն, նոր որևէ այլ գործողություն անենք՝ հոգեհանգիստ և հողարկավորություն: Երևանում ծնողներից Ջիվանը (Արտակ Միքայելյանի հայրը) ու Անահիտը (Հայկ Մելիքյանի մորաքույրը), բանակցային և բացատրական աշխատանքների շնորհիվ, այդ ձեռքերը փոխանցեցին մեզ, իսկ մենք քրիստոնեական կարգով, կատարեցինք հուղարկավորությունը: Նաիրիի հուղարկավորությունը եղավ 2021 թվականի օգոստոսի 26-ին: Կարծես համակերպվել էինք արդեն կորստի հետ, սակայն նոյեմբերին ադրբեջանական կողմը հայկական կողմին հանձնեց տասնմեկ հոգու խառը մասունքներով պարկեր, և որդուցս կրկին ստացանք մասունքներ: Դեկտեմբեր ամսին երկրորդ հուղարկավորությունը տեղի ունեցավ: Արդեն ընտանիքում բոլորս խելագարվում էինք այդ իրողությունից, երկու անգամ գերեզման ենք քանդել»:*

30. Հարցված զոհված զինծառայողների ընտանիքի վերջին անդամը՝ զոհված զինծառայող Լ. Գ.-ի հայրը՝ Մ.Գ.-ն, պատմել է.

*«Հենց առաջին իսկ օրվանից մեր ծնողների հետ միասին մասնակցել եմ գրեթե բոլոր որոնողական աշխատանքներին: Առաջին անգամ գտանք ինը երեխայի մասունք, որոնք տեղափոխվեցին Երևանի ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ: Դեկտեմբեր ամիսն էր, նույնականացումը եղավ մարտ ամսին, մենք կրկնակի փորձաքննության տվեցինք, մայիսին հայտնեցին, որ մասունքների նույնականացման արդյունքները հաստատում են մեր որդու Լևոնի հետ համընկումը: Կինս այդ լուրից գիտակցությունը կորցրեց, շտապ օգնության բուժանձնակազմն է կարողացել նրան օգնություն ցուցաբերել: Ցավալին այն էր, որ այս սարսափելի պահերը մեր կյանքում չէին ավարտվել: 2021 թվականին նոյեմբերին ադրբեջանցիները հանձնեցին մասունքներ, որտեղ*

*իմ որդուց էլի կային ոսկորներ, մենք երկրորդ անգամ քանդեցինք երեխայի գերեզմանը և կրկին հուղարկավորեցինք նրան: Կնոջս առողջական վիճակը այս դեպքով պայմանավորված կրկին վատացավ: Այսքանով չավարտվեց սարսափելի իրողությունը: Ամիսներ անց կրկին մասունքներ գտնվեցին, նույնականացան և համընկան Լևոնիս հետ, այս անգամ կնոջս ոչինչ չասացի, միայնակ երրորդ հուղարկավորությունն արեցի»:*

## 2) 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի պատերազմի ժամանակ զոհված հայ զինծառայող Ս.Կ.-ի ընտանիքը.

31. Գեղարքունիքի մարզի Փոքր Մասրիկ գյուղում բնակվող 61-ամյա Հ Կ-ն պատմում է, որ 2022 թվականի սեպտեմբերին Կուտականի լեռներում տեղի ունեցած կարճատև մարտերից հետո այնտեղ էր իր 34-ամյա որդու՝ Ս. Կ.-ի դիակը, նախ եղել է իր զինվորական հագուստով, իսկ հետագայում ոսկորներ կան[17].

*«Ամեն օր արցունքն աչքերիս տանից դուրս էի գալիս, սարին նայում, որի վրան իմ երեխան էր պառկած, ի՞նչ անեի, էդ երեխայի դիակը չէին կարողանում հանել, բերել, մեզ չորս ամիս լացացրել են»:*

32. Միայն որոշ ժամանակ անց ծառայակիցների հետ զրույցներից են պարզել, թե ինչ է կատարվել Ս. Կ.-ի հետ:

*«Կոչ են արել մեքենայով գնալ դիրքեր օգնության, 12 հոգով, Ս. Կ.-ն եղել է իրենց թիկունքում, գնացել են դիրք, բայց պարզվում է, որ դիրքն արդեն թուրքական է, երբ սկսել են կրակել մեքենայի վրա, նրանցից 11-ը փախել են, մեզ ասում են, որ մի քանի մետր դիրքից իջեցրել են, բայց չեն կարողացել հետ բերել»:*

33. Զգալիորեն երկար ժամանակ Ս.Կ.-ի դին գտնվում էր Կուտականի միջդիրքային գոտում: Հարազատները տեսահսկման սարքերի և անօդաչու թռչող սարքի միջոցով լուսանկարել են նրան զինվորական համազգեստով, իսկ հետո՝ մասունքները: Նրա հայրն ասաց.

*«Հետո թուրքերը բերեցին, պոստ դրեցին, գոնե երրորդ օրը ասեին, ուրիշ կերպ կբերեինք երեխայի դիակը»:*

## 2) Այլ դեպքեր

34. Արցախում 44-օրյա պատերազմի ընթացքում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հայկական ՀԿ-ների պատրաստած զեկույցում արձանագրվել է ևս մեկ դեպք: Սաշայի որդու՝ Արսենի ճակատագրի մասին տևական ժամանակ տեղեկություն

[17] «Ազատություն» ռադիոկայանի «Հայ զինվորի 13 դիակի նույնականացում» հոդվածը հասանելի է https://www.azatutyun.am/a/32167470.html հղմամբ:

չկար: Նաև Կ.Մ.-ի գերեվարումը հարազատներին հայտնի է դարձել միայն նրանց պատկերող տեսանյութերի հրապարակումից հետո:

35. Փաստահավաք խմբի հետ հարցազրույցներում հարցվածներն այն ժամանակ հայտնել են անհայտ կորած համագյուղացիների մասին. օրինակ՝ Հ.Ս. Բերդաշեն գյուղից հայտնել են գյուղից անհետ կորած յոթ մարդու մասին: Ա.Ա.-ի վերաբերյալ դեպքում (տե՛ս վերևում), նրա գտնվելու վայրն անհայտ էր իր ընտանիքի անդամներին գերեվարվելուց հետո առնվազն տասը օր, մինչև ԿԽՄԿ-ի պատվիրակները այցելեցին նրան, և նա հնարավորություն ստացավ կապ հաստատել իր կնոջ հետ[18]:

36. Վերոհիշյալ ապացույցները վկայում են զոհված հայ զինվորների հարազատներին հոգեկան տառապանք և տագնապ պատճառելու ադրբեջանական կողմի մտադրության մասին: Դրանք հստակ նկարագրում են խնդրո առարկա մարդու իրավունքների խախտումների շարունակականությունը 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի պատերազմից մինչ այսօր: Ավելին, ապացույցները ներկայացնում են ռազմական հանցագործությունների վերաբերյալ օբյեկտիվ հիմքեր և հայտարարություններ, որոնց միջազգային իրավական չափանիշները քննարկվում են ստորև:

## II. Միջազգային և տարածաշրջանային իրավական կարգավորումներ

37. Զինված հակամարտությունների ժամանակ արձանագրվում են մարդու իրավունքների խախտումներ: Այդ խախտումները վերաբերում են ոչ միայն զոհերին, այլև նրանց հարազատներին ու ընտանիքի անդամներին: Այն կարող է ներառել բռնի անհետացման դեպքեր, որոնք առաջացնում են անորոշության տառապանք իրենց սիրելիների ճակատագրի նկատմամբ և դիտարկվում որպես նրանց իրավունքների ոտնահարում: Ավելին, այս շրջանակում կարող են դիտարկվել նաև հարազատների մահվան հաստատված իրավիճակները և նրանց մարմինների նկատմամբ վերաբերմունքը:

### 1) Մահացածների աճյունների և անձնական իրերի վերադարձը

38. Մահացածների աճյունների և անձնական իրերի վերադարձը Միջազգային մարդասիրական իրավունքի կարևոր սկզբունքն է: Համաձայն Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից պատրաստված Միջազգային մարդասիրական իրավունքի սովորութային կանոնների՝ հակամարտող կողմերը պետք է ձգտեն նպաստել մահացածների աճյունների վերադարձին այն կողմի խնդրանքով, որին նրանք պատկանում են կամ իրենց իրավահաջորդի խնդրանքով: Նրանք պետք է

[18] Հայաստանի ՀԿ-ների զեկույց «Մարդու իրավունքների խախտումները 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում», էջ 152-153, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.osf.am/wp-content/uploads/2022/06/Fact-Finding-Report_FINAL_web.pdf.

հարազատներին վերադարձնեն իրենց անձնական իրերը[19]:

39. Պետությունների պրակտիկան սահմանում է այս կանոնի սովորութային բնույթը միջազգային զինված հակամարտություններում: Մահացածների աճյունները վերադարձնելու կանոնը հիմնված է Ժնևի կոնվենցիաների վրա[20]: Կոնվենցիաների համապատասխան դրույթները, սակայն, բավականին ընդհանուր են և պահանջում են կողմերի միջև համաձայնություն մասունքների վերադարձի համար: Առաջին լրացուցիչ արձանագրության նույնպես ճանաչում է նման համաձայնագրի անհրաժեշտությունը և սահմանում է ընթացակարգը, որը պետք է պահպանվի համաձայնագրի բացակայության դեպքում[21]:

## 2) Բռնի անհետացում

40. Նկատի ունենալով, որ Ցորի զորամասի հայ զինվորների հարազատները մոտ մեկ տարի տեղեկություն չեն ստացել իրենց սիրելիների գտնվելու վայրի մասին, հարկադիր անհետացման հարցը նույնպես պետք է դիտարկել ընթացիկ զեկույցի համատեքստում:

41. Համաձայն «Բոլոր անձանց հարկադիր անհետացումից պաշտպանելու մասին» միջազգային կոնվենցիայի՝ հարկադիր անհետացումը համարվում է ձերբակալությունը, կալանավորումը, առևանգումը կամ ազատությունից զրկելու ցանկացած այլ ձև պետության գործակալների կամ գործող անձանց կամ անձանց կողմից: Պետության թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ, որին հաջորդում է ազատությունից զրկումը ճանաչելուց հրաժարվելը կամ անհետացած անձի ճակատագիրը կամ գտնվելու վայրը թաքցնելով, ինչը նման անձին զրկում է օրենքի պաշտպանությունից[22]:

42. Նույն կոնվենցիան սահմանում է, որ անդամ պետությունները պետք է համագործակցեն և միմյանց տրամադրեն փոխադարձ օգնություն՝ բռնի անհետացմամբ զոհերին որոնելու, գտնելու և ազատ արձակելու համար, իսկ մահվան

[19] Միջազգային մարդասիրական իրավունքի սովորութային կանոնները պատրաստվել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից, կանոն 114, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://ihl-databases.icrc.org/en/customary-ihl/v1/rule114#:~:text=international%20armed%20conflicts-,Կանոն%20114.,նրանց%20անձնական%20ազդեցությունը%20%20նրանց

[20] Ժնևի առաջին կոնվենցիա, հոդված 17(3), հասանելի՝ https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.30_GC-I-EN.pdf
Ժնևի երրորդ կոնվենցիա, հոդված 120(6), հասանելի՝ https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.32_GC-III-EN.pdf
Ժնևի չորրորդ կոնվենցիա, հոդված 130(2), հասանելի՝ https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.33_GC-IV-EN.pdf

[21] Լրացուցիչ արձանագրություն I, հոդված 34(2) և (3), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-additional-geneva-conventions-12-august-1949-and

[22] Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա, ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 23-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 47/133 բանաձևով, հոդված 2, հասանելի հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-protection-all-persons-enforced.

դեպքում՝ արտաշիրիմելու, նույնականացնելու և նրանց աճյունները վերադարձնելու համար[23]:

43. Այն բնութագրվում է երեք միաբերված տարրերով.

- անձի կամքին հակառակ ազատությունից զրկելը,
- պետական պաշտոնյաների ներգրավում, թեկուզ համաձայնությամբ,
- ճանաչումը մերժելը, ազատությունից զրկելը կամ անհետացած անձի ճակատագիրը կամ գտնվելու վայրը թաքցնելը:

44. Անհետացումն ունի կրկնակի պարալիզացնող ազդեցություն տուժողի վրա, որը զրկված է օրենքի պաշտպանությունից, հաճախ ենթարկվում է խոշտանգումների և մշտական վախի մեջ է իր կյանքի համար, ինչպես նաև նրանց ընտանիքների վրա՝ անտեղյակ իրենց սիրելիների ճակատագրից, նրանց հույզերը տատանվում են հույսի և հուսահատության, զարմանքի և սպասման միջև՝ տարիներ ձգվող սպասման գոնե որևէ նորության, որը կարող է երբեք էլ չլինել:

45. Բռնի անհետացումը հաճախ օգտագործվել է որպես հասարակությունների ներսում սարսափ տարածելու ռազմավարություն: Այս պրակտիկայի արդյունքում առաջացած անապահովության զգացումը չի սահմանափակվում միայն անհետացածների մերձավոր ազգականներով, այլ նաև ազդում է նրանց համայնքների և ամբողջ հասարակության վրա[24]:

46. Ավելին, Բռնի անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան նշում է, որ բռնի անհետացման համատարած կամ համակարգված պրակտիկան հանդիսանում է մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ինչպես սահմանված է կիրառելի միջազգային իրավունքով և պետք է առաջացնի նման կիրառելի միջազգային իրավունքով նախատեսված հետևանքները[25]:

47. Ելնելով միջազգային դատարանների նախադեպային իրավունքից, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունից, կարելի է տեսնել, որ մարդկության դեմ հանցագործությունները հանցագործություններ են, որոնք կատարվում են սույն համատեքստում: Այլ կերպ ասած, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները բնութագրվում են համատեքստային տարրերով: Այդ հատուկ տարրերը հնարավորություն են տալիս տարբերակել, օրինակ, սպանությունը որպես

[23] Ibid. հոդված 15.

[24] ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կայքում տեղակայված հոդված «Բռնի անհետացման մասին» կազմված Բռնի կամ ոչ կամավոր հարցերի աշխատանքային խմբի կողմից՝ enforced-disappearance#:~:text=An%20enforced%20disappearance%20is%20considered,deprivation%20of%20liberty%20or%20by.

[25] Բռնի անհետացումներից բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա, ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 23-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 47/133 բանաձևով, հոդված 5, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-protection-all-persons-enforced.

սովորական հանցագործություն սպանությունից, երբ դա տեղի է ունենում որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Նույնը վերաբերում է բռնի անհետացումներին:

48. Միջազգային երկու ժամանակավոր քրեական տրիբունալների նախադեպային իրավունքը, ի թիվս այլնի, նախկին Հարավսլավիայի վերաքննիչ պալատի ժամանակավոր միջազգային քրեական տրիբունալի վճռով դատախազ Վ Դրագոյուբ Կունարաչի, Ռադոմիր Կովաչի և Զորան Վուկովիչի դատավճռով Վերաքննիչ պալատը համարել է, որ մարդկության դեմ հանցագործության համատեքստային տարրերը հետևյալն են.

a. տեղի է ունեցել «հարձակում»
b. հարձակումը թիրախավորել է ցանկացած քաղաքացիական բնակչության.
c. այս հարձակումը պետք է լինի համատարած կամ համակարգված.
d. հանցագործը գիտեր հարձակման մասին[26]:

49. Այս նույն տարրերը կրկնվում են Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտում (Հռոմի Ստատուտ). մարդկանց բռնի անհետացումը մարդկության դեմ ուղղված հանցագործություններից է, երբ կատարվում է որպես համատարած կամ համակարգված հարձակման մաս, և որն ուղղված է ցանկացած քաղաքացիական բնակչության դեմ՝ իմանալով այդ հարձակման մասին[27]:

50. Կանոնադրության սահմանմամբ «անձանց բռնի անհետացում» նշանակում է անձանց ձերբակալում, կալանավորում կամ առևանգում պետության կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրա թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ, որին հաջորդում է ճանաչել մերժելու, ազատությունից զրկելու կամ այդ անձանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկատվություն չտրամադրելու՝ նրանց երկար ժամանակով օրենքի պաշտպանությունից զրկելու մտադրությունը[28]:

51. Միջազգային քրեական դատարանի I Նախնական պալատը շրջադարձային որոշման մեջ լայնորեն մեջբերել է նշված դատախազ Վ. Դրագոյուբ Կունարաչի, Ռադոմիր Կովաչի և Զորան Վուկովիչի վճիռը՝ կանոնադրության 7(1) հոդվածը մեկնաբանելու համար[29]:

---

[26] Նախկին Հարավսլավիայի տարածքում 1991 թվականից կատարված միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց հետապնդման միջազգային տրիբունալ, վճիռ ընդդեմ դատախազ V Դրագոյուբ Կունարաչ, Ռադոմիր Կովաչ և Զորան Վուկովիչ, 12 հունիսի 2002թ., IT-96-23 & 23/1-A, Պարագրաֆներ 71-105, հասանելի հետևյալ հղմամբ՝ https://www.legal-tools.org/doc/029a09/pdf.

[27] Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրություն, հոդված 7(1)(i), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.icc-cpi.int/sites/default/files/RS-Eng.pdf
Միջազգային քրեական դատարան, Բացատրական նշում. «Հանցագործության տարրեր», հոդված 7(1)(i), հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.icc-cpi.int/sites/default/files/Publications/Elements-of-Crimes .pdf

[28] Ibid. Հոդված 7(2)(i)

[29] Միջազգային քրեական դատարանի I նախնական պալատը, դատախազն ընդդեմ Ահմադ Մուհամմադ Հարունի («Ահմադ Հարուն») և Ալի Մուհամմադ Ալի Աբդ-Ալ-Ռահմանի («Ալի Քուշայբ»), n° ICC-02/05-01/07,

52. Ավելին, բռնի անհետացման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը, իր ընդհանուր մեկնաբանության մեջ բռնի անհետացումները համարելով մարդկության դեմ հանցագործություն, նշել է, որ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 7(1) հոդվածով տրված սահմանումն այժմ արտացոլում է միջազգային սովորութային իրավունքը[30]:

53. Ե՛ւ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի պատերազմը, և՛ 2021 թվականի սեպտեմբերյան պատերազմը պարունակում են մարդկության դեմ հանցագործությունների համատեքստային տարրեր: Մասնավորապես, առաջին դեպքում հարձակում է եղել Արցախի (Լեռնային Ղարաբաղի), իսկ երկրորդ դեպքում՝ Հայաստանի դեմ: Երկու դեպքում էլ հարձակումները եղել են համատարած ու համակարգված՝ թիրախավորելով քաղաքացիական համայնքները: Դա են ապացուցում մի շարք փաստահավաք զեկույցներ, ֆոտո և տեսանյութեր, միջազգային հանրության հայտարարություններ և այլն: Երկու հարձակումների մասշտաբներն էլ ավելի քան բավարար էին, որպեսզի մեղավորները տեղյակ լինեին այդ մասին:

54. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը քննարկում է սպանությունների գործերով բռնի անհետացման վերաբերյալ որոշ բացառություններ: Ընդհանուր առմամբ, նույն սկզբունքը հիմնականում չի կիրառվի այն իրավիճակների դեպքում, երբ մարդուն սպանում է պետության գործակալը: Այնուամենայնիվ, երբ անհայտ կորած անձի մահվան մասին լուրերին նախորդել է բավական երկար ժամանակաշրջան, երբ նա համարվում էր անհետացած, գոյություն ունի որոշակի ժամանակահատված, որի ընթացքում դիմումատուի անորոշությունը, տագնապն ու անհանգստությունը բնորոշ են անհետացման կոնկրետ երևույթին, և որը այսպիսով, կարող է առաջացնել առանձին հարց՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի համաձայն[31]:

55. Ավելին, օրինակ, Ցորի զորամասի Դ-20 հրետանային դիվիզիայի հայ զինծառայողների դեպքում հրամանատարը դեռևս անհայտ կորած է, ինչպես նշել է ընտանիքի անդամներից մեկը: Ուստի, այդ դեպքը պետք է քննարկվի նաև հարկադիր անհետացման համատեքստում, որը պատճառ է դառնում ռազմական գործողությունների ավարտից մոտ մեկ տարի անհետացած Ցորի զորամասի հայ զինվորների հարազատների մարդու իրավունքների ոտնահարման:

---

Դատախազի դիմումի վերաբերյալ որոշումը՝ համաձայն Կանոնադրության 58-րդ հոդվածի 7-րդ մասի, 2007 թվականի ապրիլի 27, 60-62-րդ կետեր, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legal-tools.org/doc/0b8412/pdf/

[30] ՄԱԿ-ի աշխատանքային խումբ բռնի անհետացման հարցերով, Ընդհանուր մեկնաբանություն Հարկադիր անհետացումները որպես մարդկության դեմ հանցագործություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Disappearances/GCas_crime_against_humanity.pdf

[31] Լուլուևը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի (2006 թ.), Դիմում No. 69480/01, §§ 114-118, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-77926

## 3) Հաստատված մահեր

56. Ինչպես պարզվել է հարցազրույցների ժամանակ, Ցորի զորամասի բոլոր հայ զինվորների ընտանիքի անդամները, ինչպես նաև այլ հայ զինվորների հարազատները ականատես են եղել Ադրբեջանի կողմից դիտավորյալ տարածված իրենց մահացած սիրելիների մասին պատմող տեսանյութերին: Կարելի է նույնիսկ փաստել, որ իրենց ստիպել են դիտել այդ նյութերը՝ իրենց որդիների, եղբայրների և ընտանիքի այլ անդամների գտնվելու վայրի մասին տեղեկություններ ունենալու համար: Ավելին, ադրբեջանցի զինվորները դիտավորյալ սպանված զինվորների լուսանկարները և/կամ տեսանյութերը ուղարկում էին նրանց ընտանիքի անդամներին:
57. Այս շրջանակում հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ի 3-րդ հոդվածի խախտման առանձին եզրակացություն է հայտնաբերվել միայն հաստատված մահվան իրավիճակներում, երբ դիմումատուները եղել են իրենց ընտանիքի անդամների տառապանքների անմիջական վկաները[32]:
58. Այս շրջանակներում 2022 թվականի սեպտեմբերյան պատերազմից հետո Ս.Կ.-ի դին իրենց տան մոտ գտնվող բարձունքից վերադարձնել թույլ չտալը ծանր տառապանքներ և դաժան վերաբերմունք է պատճառել ընտանիքի անդամներին.

## 4) Մահացածների մարմինների նկատմամբ ցուցաբերված վերաբերմունք

59. Դիակների նկատմամբ վերաբերմունքը կարող է հանգեցնել ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտմանը՝ կապված մահացածի հարազատներին:
60. Օրինակ, Խաջիալիևը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի (2008) գործով դիմումատուները չէին կարող պատշաճ կերպով թաղել իրենց երեխաների մասնատված և գլխատված մարմինները, քանի որ հայտնաբերվել էին աճյուններից միայն կտորտանքներ[33]:

## 5) 5) մահվան և հուղարկավորության միջև ընկած ժամանակահատվածի չափազանց մեծ տևողությունը

61. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ մահացածների հետ պատշաճ կերպով վարվելը՝ ելնելով մահացածի հարազատների զգացմունքների հանդեպ հարգանքից, մտնում է ՄԻԵԿ/ՄԻԵԴ-ի 8-րդ հոդվածի շրջանակում[34]:
62. Մահվան և թաղման միջև ընկած ժամանակահատվածը և այն, թե ինչպես են վարվել մահացածի մարմնի հետ մինչև այն վերադարձնելը ընտանիքի անդամներին, կարող է

[32] Ջանովիեք և այլոք ընդդեմ Ռուսսաստանի [GC] (2013), Դիմում No. 55508/07 և 29520/09, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=003-4541478-5482631
[33] Խաջիալիևը և այլոք ընդդեմ Ռուսաստանի (2008), Դիմում No. 3013/04, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/fre?i=001-89348
[34] Ջիններն ընդդեմ Ավստրիայի (2016), Դիմում No. 55495/08, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-159886.

խախտել անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը[35]:

## Ամփոփում

63. Հաշվի առնելով փաստահավաք գործունեության ընթացքում հավաքագրված ապացույցները և ընթացիկ զեկույցում նշված համապատասխան միջազգային և տարածաշրջանային չափանիշները, պետք է նշել, որ Ադրբեջանը չի ապահովել հայ զինվորների հարազատների հիմնարար իրավունքները:
64. Մասնավորապես, հայ զինվորների մասին անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու արհեստական ուշացումները կամ չտրամադրելը ընտանիքի անդամներին և հարազատներին, դիերի ու աճյունների որոնումներին խոչընդոտելը հարազատների նկատմամբ դաժան վերաբերմունք է: Ավելին, խնդրո առարկա տեսանյութերի տարածումը նաև դաժան վերաբերմունքի պատճառ է դարձել ընտանիքի անդամների նկատմամբ:
65. Զոհված զինվորների ընտանիքի անդամները երկար ժամանակ անց ստացել են ոչ թե ճանաչելի դիակներ, այլ միայն մարմնի մասերի մնացորդներ: Հարազատների կրած վիշտն ու տառապանքը դիտարկվում է որպես դաժան վերաբերմունք:
66. Մահվան և հուղարկավորության միջև ընկած ժամանակահատվածը, այն է՝ մոտ մեկ տարի, հանդիսանում է զոհված զինվորների ընտանիքի անդամների և հարազատների անձնական կյանքի խախտում:

[35] Ձիրարդն ընդդեմ Ֆրանսիայի (2011), Դիմում No. 22590/04, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-105388